

## ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՎԱՅԱՆ

### ՄԱՅՐԱՄՈՒՏ

Բառերը մայր մտան տանիքի ետևում:  
Լապտերները չեն վառվում:

Տարածությունը մայր մտան տանիքի ետևում:  
Լուսինն է լռում:

Եվ ժամանակը մայր մտան տանիքի ետևում:

Անկյունում, այն անկյունում  
փողոցն է վերջանում:

### ԿՈՇԻԿՆԵՐԻՍ ՓԱՅԼԸ

– Շտապենք, – ասում ես, – կուշանանք...  
և, հայելու դիմաց, մութ սենյակում,  
հողագույն շրթներկն ես քո քսում:

Ես՝ պատուհանի մոտ, և լռությունը փողոցի,  
և պարսատիկավոր մի տղայի հրճվանքը,  
և խփված ճնճուկը, – այդ ճնճուկը  
ընդամենը մարդ էր,  
որ թևեր ուներ: